

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2015թ. հունիսի 1-ի նիստի /արձանագրություն N 8/

1. Ուժը կորցրած ճանաչել ԵԹԿՊԻ-ի ուսանողական թատրոն – լաբորատորիայի կանոնադրության 9-րդ և 11-րդ կետերը,
- 1.1 հաստատել ԵԹԿՊԻ-ի ուսանողական թատրոն – լաբորատորիայի հետևյալ աշխատակարգը`
 - 1.1.1 կազմել ժամանակացույց յուրաքանչյուր ներկայացման բեմադրությունից առաջ և ժամանակացույցի համաձայն յուրաքանչյուր փուլն ավարտվելուց հետո ներկայացնել հաշվետվություն հանձնաժողովին,
 - 1.1.2 կազմել բեմադրվող ներկայացման նախահաշիվ, ինչպես նաև հանձնաժողովի հետ համաձայնեցնել ներկայացման ռեժիսորի թեկնածությունը, դերասանների կազմը,
 - 1.1.3 յուրաքանչյուր ներկայացման նախագիծ հաստատվելուց հետո, անհրաժեշտության դեպքում, Թատրոնի ֆակուլտետի Դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնի կողմից կցվում է ստեղծագործական աշխատանքների ղեկավար-խորհրդատու,
 - 1.1.4 ԵԹԿՊԻ-ի դահլիճը ուսանողական թատրոն – լաբորատորիային տրամադրվում է ամսվա ընթացքում 15 (տասնհինգ) օր, յուրաքանչյուր ամիս նվազագույնը երկու ներկայացում խաղալու պայմանով:
2. Հիմք ընդունելով Տիգրանուհի Նարբեյի Գրիգորյանի` նախկինում Գասպարյան, կողմից ներկայացված փաստաթղթերը (ամուսնության վկայական, անձնագիր) ամուսնության կապակցությամբ ազգանվան փոփոխությունը համարել վավերական,
- 2.1 ս.թ. հունիսի 1-ից Տիգրանուհի Նարբեյի Գրիգորյանին սահմանված կարգով կցազրել հեռակա ֆակուլտետի «կինոարվեստ» մասնագիտության III կուրսում:
3. Հիմք ընդունելով ամուսնության կապակցությամբ ազգանունը փոխելու փաստը և ներկայացված փաստաթղթերը, ինստիտուտի 2012թ. շրջանավարտ Ռիմա

Արմենի Պողոսյանին տրված ռեժիսուրայի բակալավրի որակավորման դիպլոմը խոտանել և հատկացնել նոր դիպլոմ Ռիմա Արմենի Հովեյան անուն ազգանունով:

4. Ինստիտուտի գովազդն ակտիվացնելու նպատակով հանձնարարել
Հ. Ավագյանին մինչև սեպտեմբեր պատրաստել ինստիտուտի բուկլետը:
5. Մ.թ. հունիսի 8-ին ժ. 11-ին կազմակերպել մագիստրատուրայի 2015-2016 ուս. տարվա ընդունելության առաջին փուլը:
6. Մ.թ. հունիսի 9-ին հրավիրել 2015թ. ընդունելության առարկայական հանձնաժողովների նախագահների խորհրդակցություն:
7. Հանձնարարել ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Մինասյանին և գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանին առաջիկայում կատարել ճշգրիտ նախահաշվարկ և ներկայացնել իրատեսական առաջարկ սեպտեմբեր ամսից պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձը բարձրացնելու համար:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան